

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի գրությունը

կարգադրում եմ՝

1. Մարզի „Վարդենիսիի հիվանդանոց” պետական փակ բաժնետիրական ընկերությունում շտապօգնության բաժանմունքի գործունեությունն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Աղեկյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
/Նախագահ/

Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի
վարիչ

Ղալակչյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ՖՍՔՁ վարչության
հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ 10-օրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմ:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

